Արձանագրություն N 2

«ՉԱԻ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Կոմիտասի 49/4

«26» «09» 2016թ
ժ.14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մկրտումյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Օհանյան, Գ.Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյան

1. Բաց ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Մկրտումյան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«Նուշիկյան Ասոցիացիա » ՍՊԸ	-	ք.Երևան,Սալաթ-Նովա 11/1, հեռ.096-40-40-06, arthur .sargsyan@nushikyan.am,info@nushikyan.am

Որոշում թիվ 1.

Հրավերով սահմանված՝ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու, բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին նախնական տվյալներով համապատասխանում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

N	Ապրանքի անվանումը	ինքնարժեք	շահույթ	ԱԱՀ	ընդամենը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	ստուգաչափման ինքնակպչուն դրոշմանիշների տպագրման աշխատանքներ	9700000	1550000	2250000	13500000

Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունել ի գիտությունը, որ ընթացակարգի քարտուղարը գնահատման թերթիկների երկուական օրինակ հանձնեց հանձնաժողովի անդամներին:

Որոշում թիվ 2.

Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին;

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները Գնահատականը			Մասնակցի հայտի գնահատման արդյունքները Մասնակցի անվանումը «Նուշիկյան Ասոցիացիա » ՍՊԸ
1	Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին	Բավարար Անբավարար	բավարար
2	Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.	Բավարար Անբավարար	բավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		Բավարար Անբավարար	բավարար

Որոշում թիվ 3.

Հանձնաժողովը որոշեց «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար հետևյալ հիմնավորմամբ՝ հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Որոշում թիվ 4.

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենիք 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և հաշվի առնելով, որ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, հանձնաժողովը որոշեց «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ-ի հետ առաջարկված գնի նվազեցման նպատակով վարել բանակցություններ:

Բանակցությունների համար սահմանվել է 15 րոպե ժամանակ:

Բանակցությունների արդյունքում «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի փոփոխվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Որոշում թիվ 5.

Ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց առաջին (ընտրված մասնակից) 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ- ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Որոշում թիվ 6.

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ կետերը հանձնաժողովը որոշեց՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մկրտումյան)

Որոշում թիվ 7.

Հանձնաժողովը որոշեց «ՁԱԻ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:00-ին, ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա.Մկրտումյան
Անդամներ՝		Ա.Օհանյան
		Գ.Մանուկյան
Քարտուղար՝		Հ.Ղազարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան **«26» «09» 2016թ**

«ՉԱԻ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մկրտումյանս, անդամներ՝ Ա.Օհանյանս և Գ.Մանուկյանս հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ վերոնշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա.Մկրտումյան
Անդամներ՝		Ա.Օհանյան
		Գ.Մանուկյան